

**Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանն ամփոփեց աշխատանքային գործունեության  
100 օրը**

Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը հունվարի 23-ին մարզպետարանում հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին ներկայացրեց իր պաշտոնավարման 100 օրվա գործունեության ընդհանուր պատկերը, արձանագրված ձեռքբերումները եւ առաջնահերթ անելիքները: «Իմ պաշտոնավարման 100 օրը կարելի է համարել աշխատանքային ծանրաբեռնված շրջան, որը համընկավ աշխատանքային տարվա փակման, համապետական ընտրությունների անցկացման եւ հերթական տարվա մեկնարկի հետ: Պետք է շեշտել, որ ՀՀ ԱԺ ընտրությունները Հայաստանի Հանրապետության պատմության մեջ բացառիկ էին թափանցիկության, արդարության ու ազատ կամարտահայտման տեսանկյունից, որի ժամանակ ինչպես մեր Հանրապետությունում, այնպես էլ Գեղարքունիքի մարզում չգրանցվեցին լուրջ միջադեպեր կամ խախտումներ: Հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանը գործել է ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկով: Բավական է ասել, որ այդ ընթացքում մարզպետարան է մուտքագրվել 3820 փաստաթուղթ, որից 2030 գրության պատասխանվել է, մնացածների պատասխանը գտնվում է ընթացքի մեջ: Ստացվում է, որ մենք օրական գործ ենք ունեցել 38-40 գրության հետ: Մարզպետի կողմից արձակվել է 136 կարգադրություն, 98 որոշում: Այդ ընթացքում ունեցել եմ համայնքային 40 այցելություն, ինչի արդյունաբերում մեզ հաջողվել է գրեթե ամբողջությամբ բոլոր համայնքներում գույքագրել առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրները: Իսկ այժմ մենք գտնվում ենք դրանց լուծման մեկնարկային փուլում», - ներկայացրեց Գնել Սանոսյանը: Այնուհետ մարզպետն անդրադարձավ առանձին ոլորտներում արձանագրված ձեռքբերումներին կամ իրավիճակին:

**Տինանսական ոլորտում** 2018թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում մարզի 21 հանրակրթական ուսումնական հաստատություններում կատարվել է հաստատված նախահաշիվների փոփոխություններ և 86մլն. 187 հազ.դրամ հատկացվել է ընթացիկ վերանորոգման և գույքի ձեռք բերման նպատակով:

**Առողջապահության ոլորտում** շահագործվել է Սեւանի արդիականացված բժշկական կենտրոնի շենքը, շտապօգնության ծառայությունները համալրվել են նորագույն շտապօգնության ավտոմեքենաներով: Հաշվետու ժամանակահատվածում մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում ծնվել է 770 երեխա: Մարզի առողջապահական հաստատությունների կողմից կազմակերպվել եւ անցկացվել է 9 «Բաց դռների օր»:

**Սոցիալական ապահովության ոլորտում** ավելի քան 197 կարիքավոր ընտանիքներ մարզպետի կողմից ստացել են դրամական օգնություն: Օգնություն է ցուցաբերվել նաև բազմազավակ, զոհված կամ վիրավոր ազատամարտիկների, Ապրիլյան պատերազմի մասնակից զինծառայողների ընտանիքներին, որի ընդհանուր գումարը կազմել է 16 միլիոն 266 հազար դրամ:

**Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում** շահագործման է հանձնվել Գավառ քաղաքի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի եւ Մարտունի քաղաքի ավագ դպրոցի

նորակառույց ու արդիականացված շենքերը, որոնց բացմանն անձամբ մասնակցել է ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Կազմակերպված մի շարք մշակութային միջոցառումներին և փառատոներին իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել մարզի կրթական ու մշակութային հաստատությունների սաները: Մարզի դպրոցականները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև մարզական տարբեր ստուգատեսերի և մրցումների ժամանակ: Ուսումնական 21 հաստատություններում տնտեսված միջոցների հաշվին, 86 միլիոն դրամի շրջանակներում իրականացվել կամ ընթացքի մեջ են գտնվում հիմնանորոգման կամ գույքի ձեռքբերման աշխատանքները: «Կրթական համակարգում այս պահի դրությամբ ունենք 1 միլիարդ 461 հազար դրամի տնտեսում, որն առաջիկայում ուղղելու ենք հիմնանորոգման, գույքի ձեռքբերման ծրագրերի իրականացմանը, առանձին դպրոցներում՝ նաև աշխատավարձերի բարձրացմանը», - հավաստեց մարզպետը:

**Գյուղատնտեսության ոլորտում** 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գեղարքունիքի մարզի համայնքներում առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծվել է համապատասխան հանձնաժողով: Մարզի սահմանամերձ Ճամբարակ համայնքի և Վահան բնակավայրի հողօգտագործողներին փաստացի ցանված աշնանացանի համար, 49.17 հեկտարի հաշվով տրվել է սուբսիդիա 2 մլն 950 հազ. 200 դրամի չափով, որը բաժին է հասել 45 շահառուների: Ավարտվել են անասնահամաճարակների եւ մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումները:

**Բնապահպանության ոլորտում** պարբերաբար իրականացվել են շրջայցեր՝ մարզի տարածքում բնապահպանության օրենսդրության դրվածքը ուսումնասիրելու նպատակով: Այս ընթացքում կոնկրետ դեպքերով կատարվել են չորս այցելություններ, որոնք վերաբերվում են մարզի Լճաշեն համայնքի վարչական տարածքից և Սևան համայնքի Ցամաքաբերդ բնակավայրից սևահողի ապօրինի հանմանը, Չկալովկա համայնքի մայրուղուն հարող տարածքում քանդման աշխատանքներին և Գանձակ համայնքով հոսող գետի հունի քանդմանը: Առաջին 2 դեպքերով զբաղվում են իրավապահ մարմինները, մյուս 2 դեպքերով կազմվել են արձանագրություններ:

Սևանա լճում սիգ ձկնատեսակի ձվադրման հետ կապված /20.12.2018թ. - 20.01.2019թ./ որսի արգելքի խստացման ժամանակահատվածի քննարկման վերաբերյալ քառակողմ միջոցառումների ծրագիրը քննարկվել է մարզպետարանում: Ըստ հաստատված ծրագրի՝ իրականացվել են համատեղ նախատեսված միջոցառումները և յուրաքանչյուր տասնօրյակը մեկ ամփոփվել են կատարված աշխատանքների արդյունքները: Մարզպետարանի աշխատակիցները մասնակցել են «Սևան» ազգային պարկի և ոստիկանության հետ համատեղ իրականացված շրջայցերին, կանխարգելիչ գործողություններին: **Հողաշխանարարության և հողօգտագործման ոլորտում** օրենքով սահմանված կարգով Գեղամասար և Ծաղկաշեն համայնքներում փոխվել են բջջային կայանների կառուցման համար անհրաժեշտ հողամասերի նպատակային նշանակությունները:

**Քաղաքաշինության ոլորտում** 2018թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներով ավարտվել են Սևան քաղաքի N 1 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները, որոնց համար հատկացվել է 42,9 մլն. դրամ: Շարունակվել են Ջուլաքարի համայնքի N 2 միջնակարգ դպրոցի հիմնավերակառուցման և Սևան քաղաքի մշակույթի

տան հիմնանորոգման աշխատանքները՝ որոնց համար համապատասխանաբար հատկացվել է 147,3 մլն. և 157, մլն. դրամ: Սկսվել են Ն.Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման եւ նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, որոնց համար հատկացվել է 49,1 մլն. դրամ: ՀՀ կառավարության հատկացրած միջոցներով վերականգնվել է Վ.Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի՝ քամուց տուժած երկու մասնաշենքերի տանիքները, որոնց համար ծախսվել է 14,6 մլն. դրամ: ՀՀ կառավարություն են ներկայացվել թվով 18 հրատապ լուծում պահանջող ծրագրեր, որոնցից երկուսը (Գանձակ համայնքի խորքային հորի հորատում և Ծաղկաշեն համայնքի խորքային հորի պոմպի ձեռքբերում) ավարտվել են, իսկ մնացած ծրագրերի համար շուտով կհայտարարվի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթներ: Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ շարունակվել են Գավառի N 2 հիմնական դպրոցի շենքի շինարարական աշխատանքները: «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի /IFAD/ միջոցով ավարտվել են՝ Վ.Գետաշեն գյուղի խմելու ջրագծի արտաքին ցանցի կառուցումը, որտեղ ներդրվել է 79.9 մլն դրամ, եւ Զուլաքար համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցումը, որտեղ ներդրվել է 196.6 մլն դրամ:

2018 թվականին ՀՀ պետական և համայնքային բյուջեների հաշվին մարզում ներդրվել է 3միլիարդ 339.5 մլն. դրամ, որից 2869.7մլն.դրամը ՀՀ պետական բյուջեից, 469.7 մլն.դրամը՝ համայնքային բյուջեներից: Ընդհանուր առմամբ հիմնանորոգվել են 28.9կմ տարբեր նշանակության ճանապարհահատվածներ և փողոցներ, 3 կամուրջներ, 3 փլվածքներ, տեղադրվել են 5169 գծամետր մետաղական արգելափակոցներ, ինչպես նաև իրականացվել են պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման աշխատանքներ:

**Ջարգացման ծրագրերի, տուրիզմի եւ վերլուծության ոլորտում** ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել 46 սուբվենցիոն ծրագրային հայտեր, որոնցից հաստատվել է 41-ը: Դրանք իրականացվել են ամբողջությամբ: Համատեղ աշխատանք է իրականացվում Ֆրանսիայի Իզերի դեպարտամենտալ խորհրդի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև 2019-2021թթ. Համագործակցության համաձայնագիր վերաստորագրելու, ինչպես նաև ՌԴ Սարատովի և Գեղարքունիքի մարզերի միջև հուշագիր կնքելու ուղղությամբ: Աշխատանքներ է իրականացվում մարզի բոլոր համայնքների հետ՝ 2019 թվականի ապրիլին կազմակերպվելիք «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» ներդրումային համաժողովի կազմակերպման գործում: «Մենք համաժողովի հրավիրման օր ենք սահմանել 2019 թվականի ապրիլի 19-ը, որպեսզի բոլոր համայնքները կարողանան հավուր պատշաճի ներկայացնել իրենց համայնքների զարգացման առաջնահերթությունները, հնարավորությունները, գործարարներին ներկայացվող հստակ առաջարկները, ապահովել բոլոր գործարարների մասնակցությունը: Այդ համաժողովի աշխատանքներին պետք է հաջորդեն կոնկրետ ու արդյունավետ քայլերը, տեսանելի լինեն թե սպասվող ներդրումները, թե իրականացվող ծրագրերը եւ ձեռքբերումները», -շեշտեց Գնել Սանոսյանը:

**ՏԻ և ՀԳՄՀ ոլորտում** կայացել են համայնքային ծառայողների թափուր պաշտոնների վերաբերյալ մրցույթներ, հաղթողները նշանակվել են աշխատանքի: Մարզի 16 համայնքներում անցկացվել են 35 համայնքային ծառայողների ատեստավորումներ: 2018թ.նոյեմբերին հերթական վերապատրաստում են անցել 11 համայնքային ծառայողներ:Աջակցություն է ցուցաբերվել հասարակական կարգի պահպանության, փրկարարական աշխատանքների,

տեղական կամ համապետական ընտրությունների կազմակերպման եւ անցկացման ուղղություններում:

**Իրավաբանական ոլորտում** մարզի համայնքների կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան են ներկայացվել համայնքների ավագանիների թվով 458 որոշումներ: Դրանց իրավական փորձաքննության արդյունքում 13 որոշումներ համապատասխան պարզաբանմամբ վերադարձվել են տվյալ համայնքներ՝ թերությունները վերացնելու նպատակով: ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարաններին են ներկայացվել 2 հայցապահանջներ: Իրավաբանական բաժինը ընդհանուր իրավասության, վերաքննիչ դատարաններում շուրջ 12 անգամ հանդես է եկել որպես հայցվորի և պատասխանողի ներկայացուցիչ, ինչպես նաև պատասխանել է թվով 8 քննչական պահանջների:

**Ներքին աուղիտի ոլորտում** հաշվետու ժամանակահատվածում խորհրդատվական ծառայություն է մատուցվել մարզի առողջապահական հաստատություններին, Սարուխանի բուժամբուլատորիայում անցկացվել է աուղիտ 2015-2018 թվականների գործունեության վերաբերյալ: Մարտունու ՄՍՏԳ-ում կատարվել է 2016-2018 թվականների գործունեության ուսումնասիրություն: Կազմվել է 2019 թվականի աուղիտի ռազմավարական եւ տարեկան ծրագիրը:

**Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտում** 2018 թվականի հոկտեմբերի 10-ից բաժնի կողմից իրականացվում է Գեղարքունիքի մարզպետարանի ֆեյսբուքյան էջի տեղեկատվական սպասարկումը: Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի միջոցով հրապարակվել է տեղեկատվական բնույթի 275 տպագիր նյութ, իսկ նույն էջով և մարզային հեռուստաընկերությունների հետ ունեցած համագործակցության արդյունքում թողարկվել է 138 տեսանյութ: Պաշտոնավարման ժամանակահատվածում շուրջ 40 համայնքային այցեր են կատարվել, հավաքագրել է 110-120 հիմնախնդիր, որոնք բարձրաձայնել են բնակիչները կամ ՏԻՄ ներկայացուցիչները: Հիմնախնդիրները հիմնականում կրկնվել են: Բաժինն համագործակցել է նաև մարզային թերթի և «Արմենպրես» լրատվական գործակալության հետ:

**Զորահավաքային նախապատրաստության ոլորտում** ընթանում է 2019 թվականի ձմեռային զորակոչը, որն անցնում է սահմանված ընթացակարգի եւ ժամանակացույցի համաձայն, առանց խոչընդոտների: Նորակոչիկները Հայոց բանակ են ճանապարհվում հանդիսավորությամբ, որոնց մասնակցում են մարզպետը եւ մարզպետի տեղակալները: 2019 թվականի ընթացքում անցկացվել է Գեղարքունիքի մարզի զորակոչային հանձնաժողովի 1 նիստ:

**Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում** Գավառի մանկատանը խնամվում են 50 երեխաներ: 2018թ. մանկատանից կենսաբանական ընտանիքներ են տեղափոխվել 4 երեխաներ: ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության կողմից ներկայացված տվյալների հիման վրա ձևավորվել է մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասներին վերաբերող մարզային շտեմարան, որտեղ 2018թ. հաշվառված է 13 անչափահաս իրավախախտ երեխա:

**Անձնակազմի կառավարման ոլորտում** կնքվել է 27 աշխատանքային և ժամանակավոր աշխատանքային պայմանագիր՝ մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ և ՊՓԲԸ տնօրենների հետ: Անցկացվել է 3 մրցույթ:

Հաշվետվության ներկայացումից հետո մարզպետ Գնել Սանոսյանը պատասխանեց լրագրողների տարաբնույթ հարցերին, որոնք վերաբերում էին համայնքների խոշորացման քաղաքականությանը, Սեւան-Քաղսի կոյուղու կոլեկտորի շինարարությանը, գյուղմթերքների իրացմանը, ճանապարհաշինական նոր ծրագրերին, Սեւանա լճում արտոնագրային ձկնորսության նոր կարգի սահմանմանը, պետական ապարատի կրճատմանը, մի շարք այլ կարեւոր ուղղությունների:

Գնել Սանոսյանը, անդրադառնալով համայնքների խոշորացման հարցին, շեշտեց, որ ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ Գեղարքունիքի մարզում այն ընթացել է՝ առանց բնակչության կարծիքը հաշվի առնելու, առանձին պաշտոնյաների, ոչ թե մարդկանց շահերը հաշվի առնելու: «Մեր մարզում խոշորացումը տվել է թե բացասական, թե դրական արդյունքներ: Առայժմ խոշորացման քաղաքականությունը չի վերանայվում, սակայն վերանայելու կամ շարունակելու դեպքում անպայման անցկացվելու են հանրային քննարկումներ, այն լինելու է միայն եւ միայն բնակչության համաձայնությամբ», - հավաստիացրեց մարզպետը: Գնել Սանոսյանն անդրադարձավ մարզպետարանի աշխատակիցներին տրված տարեվերջյան պարզեւավճարների խնդրին, որը օրերս լայնորեն շրջանառվում է հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով ու համացանցով: «Այդ պարզեւատրումները մենք կատարել ենք օրենքի շրջանակներում՝ առանց իրավախախտումների: Գումարը վճարվել է մարզպետարանում թափուր պաշտոններից առաջացած խնայողությունների հաշվին: Մենք միաժամանակ պետրյուջե ենք վերադարձրել 116 միլիոն դրամ, որը կատարել ենք խնայողությունների հաշվին: Ինչ վերաբերում է հարցի բարոյական կողմին, ապա պետք է շեշտեմ, որ վերջին կես տարվա ընթացքում մարզպետարանի աշխատակազմը, կապված երկու մարզպետների նշանակման հետ, աշխատել է նկատելի ծանրաբեռնվածությամբ, ուստի եւ արժանի էր այդ պարզեւատրմանը», - շեշտեց Գնել Սանոսյանը:

Մարզպետը միաժամանակ հույս հայտնեց, որ 2019 թվականին Գեղարքունիքի մարզում կարձանագրվեն նկատելի ձեռքբերումներ ամենատարբեր ոլորտներում, կնկատվի եւ մասնավոր ներդրումների հոսք, տնտեսական վերելք, մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի եւ կենսապայմանների բարելավում:

«Մեզ շատ բարդ, բայց հետաքրքիր ու պարտավորեցնող աշխատանքային տարի է սպասվում: Արդեն մենք շփումների մեջ ենք մի շարք գործարարների հետ, ովքեր ցանկանում են խոշոր ներդրումներ կատարել հատկապես գյուղատնտեսության եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտներում: Շատ են մեր սպասելիքները նաեւ պետական ներդրումներից, որոնց շնորհիվ համայնքներում կիրականացվեն սոցիալ-տնտեսական ու կենսական կարեւորության բազմաթիվ ծրագրեր: Մենք քայլ առ քայլ լուծում կտանք մեր կողմից արձանագրված բոլոր հիմնահարցերին: Մեր ժողովրդից խնդրում եմ մի քիչ համբերություն դրսևորել, որպեսզի կարողանանք միջոցներ ու ժամանակ գտնել՝ տարիներ ի վեր կուտակված հիմնախնդիրների ծանրագույն բեռը հիմնավորապես թոթափելու համար», - ասուլիսը եզրափակեց մարզպետ Գնել Սանոսյանը:

